

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

Հ Ա Մ Ա Տ Ե Ղ Հ Ր Ա Մ Ա Ն

« 28 » փետրվարի 2017 թ. № 207-տ/2

« 28 » փետրվարի 2017 թ. № 47-26/1

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի հավելվածի 136-րդ կետի 12-րդ ենթակետը և ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի մոտ 2017 թվականի փետրվարի 6-ին կայացած խորհրդակցության № 14.4/[392883]-17 արձանագրության 2-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017 թվականի փետրվարի 16-ի № 01/14.4/[392883]-17 հանձնարարականի՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Ն Ք՝

1. Հայաստանի Հանրապետության նախադպրոցական, հանրակրթական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում ֆիզիկական դաստիարակության դասերի և ուսումնամարզական ծրագրերի համատեղ մշակման և իրականացման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու նպատակով ստեղծել համատեղ աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատանքային խմբին՝ աշխատանքները կազմակերպել յուրաքանչյուր շաբաթ և կատարած աշխատանքների ամփոփման աշխատակարգով մեկամսյա ժամկետում փաստաթղթերի փաթեթի նախագծի տեսքով ներկայացնել առաջարկություններ ՀՀ Կրթության և գիտության ու ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ՝

_____ Լ. ՄԿՐՏՉԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝

_____ Հ. ՌՈՍՏՈՄՅԱՆ

« 28 » փետրվարի 2017 թ.

Բ. Երևան

« 28 » փետրվարի 2017 թ.

Բ. Երևան

Հայաստանի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի և
2017 թ. փետրվարի 28 -ի № 207 -Ա/2

Հայաստանի Հանրապետության սպորտի և
երիտասարդության հարցերի նախարարի
2017 թ. փետրվարի 28 -ի № 47 -Ա/1

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ**

1. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունից՝

- 1) Գաբրիել Ղազարյան՝ նախարարի տեղակալ,
- 2) Ռաշիդ Գալստյան՝ աշխատակազմի ղեկավարի տեղակալ,
- 3) Լևոն Վահրադյան՝ աշխատակազմի մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության քաղաքականության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար,
- 4) Սվետլանա Գրիգորյան՝ աշխատակազմի մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության քաղաքականության վարչության ֆիզիկական դաստիարակության քաղաքականության բաժնի պետ,
- 5) Դավիթ Բաղումյան՝ աշխատակազմի մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության քաղաքականության վարչության ֆիզիկական դաստիարակության քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ,
- 6) Արթուր Սեդրակյան՝ աշխատակազմի մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության քաղաքականության վարչության մասսայական սպորտի բաժնի գլխավոր մասնագետ:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունից՝

- 1) Մանուկ Մկրտչյան՝ նախարարի տեղակալ,
- 2) Արա Էդոյան՝ աշխատակազմի ղեկավարի տեղակալ,
- 3) Արկադի Պետրոսյան՝ աշխատակազմի մարզառազմական և արտաուսումնական դաստիարակության վարչության պետ;
- 4) Արմեն Ոսկանյան՝ աշխատակազմի մարզառազմական և արտաուսումնական դաստիարակության վարչության գլխավոր մասնագետ,
- 5) Արթուր Կարապետյան՝ աշխատակազմի մարզառազմական և արտաուսումնական դաստիարակության վարչության առաջատար մասնագետ,
- 6) Արա Մեհրաբյան՝ Դպրոցականների հանրապետական մարզական ֆեդերացիայի Նախագահ (համաձայնությամբ),
- 7) Յուրի Գրիգորյան՝ Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ֆիզիկական կուլտուրայի տեսության ամբիոնի վարիչ (համաձայնությամբ):